Դասախոսի անուն՝ Լուսինե Ազարյան | Դաս N 3 | Խումբ՝ 3-4 տարեկաններ

Տևողություն (րոպե)	Էտապներ (անվանումը / նպատակը)	Ընթացակարգի նկարագրություն	Մեկնաբանություններ
15	1. Տաքացում՝ Ողջույն (միմյանց անունների վերհիշում և դրական վերաբերմունքի ստեղծում)	• Բվիկներն ու ուսուցիչը նստում են շրջանաձև • Ուսուցիչը հիշեցնում է իր անունը և հակիրճ կիսվում նախորդ դասի իր տպավորությունից: • Երեխաներին առաջարկում է հերթով անել նույնը (խմբերում կամ զույգերով): • Յուրքանչյուրի կողքինը վերարտադրում է իր ընկերոջ պատմածը, սկելով՝ << Բարև/Ողջույն Արամ; ես ուրախ եմ քեզ (նորից) տեսնել այստեղ>> արտահայտությունից:	Դրական վերաբերմունքի ձևավորում միմյնաց նկատմամբ: Դասի սկզբի ազդանշան (lead in).
5	2. Հանգիստ ֆիզիկական մարմնամարզություն	• Նախորդ խաղից հետո երեխաները շրջանաձև կանգնում են կատարում են ֆիզիկական մարմնամարզություն, (ցանկալի է թվեր ներառող երաժշտության ներքո):	5 րոպեանոց դադարը կարևոր է հանգստի համար, ինպես նաև ազդարարում է նախորդ վարժության ավարտը և նորի սկիզբը:

Ծանուցում՝ Տվյալ օրինակը 3-4 տարեկանների համար նախատեսված մեկ դասի դասապլան է:
Այն չի ներառում Բու-ի ամբողջական ծրագրային և առարկաների առանձնահատկությունները և նախատեսված է 2 ժամանոց դասընթացների համար:

20	3. Մաթեմատիկա	• 1-5 թվերի վերհիշում • Սովորում ենք հաշվել 6-10 քարտերի միոցով (flashcards) • Սենյակում առկա տարբեր խաղալիքների և իրերի թվարկում:	Բաց խմբային աշխատանքից անցում փոքր խմբերով աշխատանքի, որից հետո անցում զույգերով աշխատանքի: Նախորդ դասի վերհիշում և նոր նյութին անցում:
20	4. Խաղ- << գնացք>>	• Ուսուցիչը երեխաներից մեկին ընտրում է, որպես գնացք, որը դեռևս վագոններ չունի: • Նա մենակ շրջանաձև ընթանում է և երգում <<Չու - չու>>: • Այնուհետև գնացքը կկարոտի և կմոտենա որևիցե տղայի կամ աղջկա հետևյալ բառերով. << ես գնացք #1-ն եմ. պու- չիկ չիկ>> և կասի իր անունը: • Այն երեխան ում մոտեցել է ի պատասխան կասի իր անունը և կդառնա 2րդ գնացք, իսկ առաջին երեխան, ով մոտեցել է, դառնում է վագոն: • Այսպես մինչև բոլոր բվիկները միանան գնացքին, և օգտագործեն թվերը	Երեխաների մոտ զարգանում է խմբի զգացողությունը, Խաղն ակտիվացնում և թարմացնում է երեխաներին և նպատում համագործակցությանը, թվերը վերհիշելու ընթացքում:

Ծանուցում՝ Տվյալ օրինակը 3-4 տարեկանների համար նախատեսված մեկ դասի դասապլան է:
Այն չի ներառում Բու-ի ամբողջական ծրագրային և առարկաների առանձնահատկությունները և նախատեսված է 2 ժամանոց դասընթացների համար:

5	5. Հանգիստ	• Երեխաները ազատ խաղում են իրենց նախնտրած խաղալիքներով և խաղերով, իրենց նախընտրած խմբերում, կամ զույգերով: Ուսուցիչը փորձում է խթանել միասին խաղալը, բայց չի ուղղորդում, եթե երեխան ցանկանում է որոշ ժամանակ մենակ խաղալ:	Նախորդ թեմայից անցում հաջորդին, դադար՝ վերալիցքավորվելու համար:
30	6. Հայերենի դաս	• Կրկնում ենք մրգերի անունները նկարազարդ քարտերի միջոցով: • Երեխաներին տրվում է ազատ ընտրություն նյութերի, թղթերի և գույների հարցում, որպեսզի նրանք կատարեն ապլիկացիոն աշխատանք `պատրաստեն նախընտրած մրգերը: • Ավարտին երեխաները հաշվում են բոլոր աշխատանքները, համեմատում օր՝ Խնձորների քանակը, բալերի քանակի հետ (Մաթեմատիկայի ենթափուլ)	Նպաստում է մանր և միջին մոտորիկայի զարգացմանը, կրկնում են մրգերի անունները, իսկ քանի որ նրանց մոտ ավելի լավ զարգացած է պատկերավոր հիշողությունը, այսպես ավելի լավ կտպավորվի նրանց մոտ:
10	7. Ազատ խաղ	• Երեխաները ազատ խաղում են իրենց նախնտրած խաղալիքներով և խաղերով, իրենց նախընտրած խմբերում, կամ զույգերով: Ուսուցիչը փորձում է խթանել միասին խաղալը, բայց չի ուղղորդում, եթե երեխան ցանկանում է որոշ ժամանակ մենակ խաղալ:	Նախորդ թեմայից անցում հաջորդին, դադար՝ վերալիցքավորվելու համար:

Ծանուցում՝ Տվյալ օրինակը 3-4 տարեկանների համար նախատեսված մեկ դասի դասապլան է:
Այն չի ներառում Բու-ի ամբողջական ծրագրային և առարկաների առանձնահատկությունները և նախատեսված է 2 ժամանոց դասընթացների համար:

15	8. Հրաժեշտ	• Երեխաները շրջանաձև նստում են և ուսուցչի հետ ամփոփում են օրը։ • Յուրաքանչյուր երեխա ասում է, թե ինչ սովորեց այդ օրը։ • Յուրաքնչյուր երեխա իր պատրաստած միրգը նվիրում է իր կողքինին, իսկ կողքինը շնորհակալություն է հայտնում ու նվիրում իրենը։	Անցած նյութի ամփոփում, Դասի ավարտի ազդանշան

Ծանուցում՝ Տվյալ օրինակը 3-4 տարեկանների համար նախատեսված մեկ դասի դասապլան է։
Այն չի ներառում Բու-ի ամբողջական ծրագրային և առարկաների առանձնահատկությունները և նախատեսված է 2 ժամանոց դասընթացների համար։